ԿԱՐԾԻՔ

Նելլի Վանիկի Հունանյանի <<Լոգոպեդական աշխատանքների առանձնահատկությունները վաղ մանկական աուտիզմով երեխաների հաղորդակցման գործընթացում>> թեմայով ԺԳ.00.01<<Մանկավարժության տեսություն և պատմություն>> (Հատուկ մանկավարժություն) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Նելլի Հունանյանի ատենախոսական աշխատանքը նվիրված է հատուկ մանկավարժության՝ մասնավորապես լոգոպեդիայի կարևոր և արդիական հիմնախնդիրներից մեկին՝ վաղ մանկական աուտիզմով երեխաների հաղորդակցման գործընթացում լոգոպեդական աշխատանքների առանձնահատկությունների ուսումնասիրմանը, լոգոպեդական մեթոդների, միջոցների, հատուկ պայմանների ստեղծմանը:

Հիմնախնդրի արդիականությունն առաջին հերթին սահմանվում է նրանով, որ տվյալ հիմնախնդրի վերաբերյալ բացակայում են մայրենի լեզվով լոգոպեդական աշխատանքային ուղղեցույցներ, մեթոդական ձեռնարկներ ուղղված վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման գործընթացի ձևավորմանը և զարգացմանը, ինչպես նաև բացակայում են տվյալ երեխաների հաղորդակցման գործընթացը զարգացնող հատուկ հնարներ, մեթոդներ, պայմաններ:

Աշխարհում տարեցտարի մեծանում է աուտիզմ ախտանիշով երեխաների թիվը: Աուտիզմ ունեցող երեխաները տարբերվում են իրենց խնդիրների ծանրության աստիճանով՝ հոգեկան ոլորտի խանգարումներով, վարքային ոլորտներում, խոսքային գործընթացում առկա դժվարություններով, հաղորդակցվելու ցանկության բացակայությամբ: Հետևաբար տվյալ առանձնահատկությունների վեր հանումը, լոգոպեդական աշխատանքների վաղ կազմակերպումը, հատուկ մեթոդների, միջոցների, պայմանների կիրառումը թույլ կտան արդյունավետ զարգացնել այդ երեխաների հաղորդակցման կարողությունները, դրանով իսկ նպաստել հասարակության մեջ նրանց ներառմանը:

Առաջին հերթին կցանկանայինք ընդգծել, որ ատենախոսը բավականին գրագետ ձևակերպել է հետազոտության օբյեկտը, առարկան, վարկածը, նպատակը և խնդիրները, բացահայտել է գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանն առաջ քաշվող հիմնական դրույթները: Սա բնութագրում է նրան որպես գիտական աշխատողի:

Ատենախոսը հանգամանորեն իրականացրել է մասնագիտական գրականության վերլուծություն, ուսումնասիրել վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների բժշկահոգեբանամանկավարժական դասակարգման համակարգերը, վեր հանել այդ երեխաների խոսքի զարգացման առանձնահատկությունները:

Հաստատող գիտափորձի ընթացքում հետազոտողը անցկացրել է վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման ձևավորմանն ուղղված լոգոպեդական աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ սոցիոլոգիական հարցում, վեր հանել առկա դրական և բացասական կողմերը:

Հաստատող գիտափորձի ընթացքում հետազոտողը 4-7 տարեկան վաղ մանկական աուտիզմ ունեցող ախտորոշմամբ 80 երեխաների մոտ իրականացրել է հայացքով հաղորդակցվելու, իմպրեսիվ և էքսպրեսիվ խոսքի, ոչ խոսքային և խոսքային հաղորդակցման միջոցների կիրառման առանձնահատկությունների հետազոտություններ, որն իրականացրել է իր կողմից մշակած խոսքի հետազոտման քարտի միջոցով:

Ընդհանրացնելով հաստատող հետազոտության արդյունքները, ատենախոսը եկել է այն եզրահանգմանը, որ անհրաժեշտ է մշակել լոգոպեդական աշխատանքների օրինակելի համակարգ:

Ստացած տվյալները հիմք հանդիսացան երկամյա ուսուցողական մանկավարժական գիտափորձի կազմակերպմանը, անցկացմանը և արդյունավետության հիմնավորմանը:

Դրա մասին համոզիչ կերպով վկայում են ստացված մանկավարժական գիտափորձի արդյունքները: Հեղինակի կողմից ներդրված մեթոդներն ու միջոցները թույլ են տվել էականորեն բարձրացնել լոգոպեդական աշխատանքի արդյունավետությունը:

Ատենախոսության վերջում ներկայացված է 151 տարբեր լեզուներով գրականության ցանկ և հարուստ հավելված:

Այսպիսով՝ ատենախոսի կողմից երաշխավորված և փորձարարությամբ հիմնավորված մանկավարժական մեթոդները, միջոցները, ստեղծված հատուկ պայմանները նպաստել են վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հայացքով հաղորդակցվելու, ենթարկվելու և նստելու կարողության, իմպրեսիվ և էքսպրեսիվ խոսքի զարգացմանը, նրանց մոտ ազրեսիվ դրսևորումների նվազմանը, շփման շրջանակի ընդլայնմանը, արդյունավետ լոգոպեդական աշխատանքի իրականացմանը:

Փորձարկվողների քանակակազմը, անցկացված հետազոտությունների մասշտաբն ու տևողությունը և հետազոտական գործունեության ընդհանուր ծավալը հեղինակին հնարավորություն են տվել ստանալ ստույգ և կարևոր գիտական նորույթ, որին ատենախոսը տվել է համապատասխան գիտական մեկնաբանություն:

Այս բոլորի հետ մեկտեղ, մենք անհրաժեշտ ենք համարում նշել ատենախոսական աշխատանքի որոշ դիտողություններ՝

1. Բառապաշարի հարստացման գործընթացում ատենախոսը չի կիրառում շոշափողաշարժողական ընկալման մեթոդը, որն համարվում է զգայարանների և խոսքի զարգացման հզոր միջոց:
2. Աշխատանքն էլ ավելի կշահեր, եթե լոգոպեդական աշխատանքների օրինակելի համակարգում ընդգրկվեր երգեցողությունը:
3. Աշխատանքում հպանցիկ է ներկայացված խմբային աշխատանքի կիրառումը լոգոպեդական աշխատանքներում: Հաղորդակցման ունակությունների ձևավորման համար հարկավոր է կոլեկտիվ: Աուտիզմ ունեցող երեխաների հետ աշխատելիս սկզբնական փուլերում դա կարող է լինել փոքրիկ խումբ, որն անհրաժեշտ է շփվելու ունակությունները ձևավորելու համար: Ցանկալի կլիներ խմբային աշխատանքի կազմակերպումը հանգամանորեն ներկայացվեր աշխատանքում:
4. Աշխատանքն էլ ավելի կշահեր, եթե ներկայացված լիներ ծնողների հետ համագործակցության ձևերը և միջոցները:

Սակայն մեր կողմից կատարած դիտողությունները չեն իջեցնում Նելլի Հունանյանի ատենախոսական աշխատանքի արժեքը, որը հատուկ մանկավարժությունում (լոգոպեդիայի բնագավառում) համարվում է տեսագործնական կարևոր, ավարտուն, ինքնուրույն գիտական աշխատանք:

Ատենախոսության սեղմագիրը և հեղինակի գիտական հրատարակումները (թվով 7) արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները: Ատենախոսի կողմից ստացված գիտական և գործնական արդյունքները կարելի է որակել որպես կարևոր և գիտական մի հիմնախնդրի լուծում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, տեսագործնական նշանակությունը, ստացած արդյունքների հավաստիությունը, եզրահանգումների հիմնավորվածությունը հիմք են տալիս անելու ընդհանուր եզրակացություն այն մասին, որ Նելլի Վանիկի Հունանյանի <<Լոգոպեդական աշխատանքների առանձնահատկությունները վաղ մանկական աուտիզմով երեխաների հաղորդակցման գործընթացում>> խորագրով ատենախոսությունը լիարժեք և ավարտուն գիտական աշխատանք է, համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի յոթերորդ կետի պահանջներին ԺԳ.00.01<<Մանկավարժության տեսություն և պատմություն>> (Հատուկ մանկավարժություն) մասնագիտական թվանիշին, իսկ հեղինակը լիովին արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդիմախոս՝

մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ Անահիտ Մանուկյան

Դոցենտ Ա.Վ.Մանուկյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՊՄՀ-ի գիտական քարտուղար՝

մանկ.գիտ.թեկն., դոցենտ՝ Մարիամ Իսպիրյան